

Ս. Ա. Գուլլակյան

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ՔԱՋ ՆԱԶԱՐ» ՀԵՔԻԱԹԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ

Հեքիաթի թումանյանի սիրած ժանրն է։ Նա շատ բարձր է գնահատել հեքիաթի գաղափարական խորությունն ու գեղարվեստական ձևը։ «Դա գրականության մեջ ամենաբարձր արտահայտություն է, որ ամբողջը հավիտենական սիմվոլներ են»¹, — գրել է նա 1922 թ. գրականագիտ Պողոս Սակինցյանին։ Այս նամակը, որ գրված է այն ժամանակ, երբ թումանյանն արդեն ժողովրդական հեքիաթների մշակման վիթխարի փորձ ուներ, շատ կարևոր է գրողի ստեղծագործական սկզբունքները հասկանալու համար։ «Գրիմյաները հազիվ մի քանի հեքիաթ ունենան սշակած, — շարունակում է նա, — մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղավաղված ու փշաքած»։

Ռուսները երկու հատորանոց մի գիրք են հրատարակել իրենց մանկական գրականության մասին և խոստովանում են, որ Պուշկինից հետո, կամ ավելի հիշտր, «Ոսկե ձկնիկից» հետո նրանք մինչև ևսօր չեն կարողացել մի հեքիաթ մշակեն իրենց էնթան առատ ու լավ հեքիաթներից։

Իմ կարծիքով ես միայն մի հեքիաթ եմ մշակել կարգին (գուցե չնչին պակասություններ ունենա, ով գիտի) և դա «Քաջ Նազարն» է։ Եվ այժմ եթե ասում եմ «Հաղարան բլուրը» կամ, որովհետև հավաքել եմ երկար տարիների ընթացքում նրա վաթսույնից ավելի վարիանտները»։

Հեքիաթն ընկալելով որպես ժողովրդի աշխարհայացքի պատկերավոր արտահայտություն, թումանյանը ձգտել է բացահայտել նրա էությունը գեղարվեստորեն կատարյալ ու խորիմաստ տիպական կերպարներով։

Թումանյանի բոլոր ինքնուրույն հեքիաթները ուսուցողական-կենցաղային տիպի են։ Զուտ կրքալիցալից հեքիաթներ նա չունի։ Նույնիսկ այն հեքիաթները, որտեղ ֆանտաստիկայի տարր կա («Նոսող ձուկը», «Կոնատ աղջիկը»), իրենց կառուցվածքով, գործող անձանց ընկալությունները հակված են գեպի կենցաղային հեքիաթները։ Թումանյանի տարերքը կենցաղային հեքիաթն է՝ աշխարհի նկատմամբ իր երգիծական ու սատիրական հայացքով։ Հայտնի է, որ Բելինսկին երգիծական հեքիաթները համարել է «հազար անգամ ավելի կարևոր, քան ամեն տեսակի դյուցազնականները, որովհետև նրանցում (երգիծական հեքիաթներում — Գ. Ա.) վառ կերպով արտացոլվում են ժողովրդական խելքն ու աշխարհայացքը, ժողովրդի կենցաղը»²։

Դիմելով ժողովրդական ստեղծագործությանը, մշակման համար այնտեղից նյութ բնորոշելով, Թումանյանը միշտ կանգ է առել այնպիսի սկզբնաղբյուրի վրա, որտեղ արտահայտվել է ժողովրդական խելքն ու աշխարհայացքը։ Միաժամանակ նա երբեք չի փոխել, չի խեղաթյուրել ֆոլկլորային օրինակի ներքին իմաստը, նրա մեջ չի ներմուծել օտար գաղափարներ՝ դրանք իր սեփական հայացքներին ու պատկերացումներին հարմարեցնելով։ Թումանյանի ստեղծագործական հետաքրքրությունը շարժել է միայն այն սկզբնաղբյուրը, որը արտահայտել է ժողովրդի սոցիալական ու բարոյական ըմբռնումները և համընկել է գրողի սեփական ըմբռնումներին։ Թումանյանը ոչ թե բնագործական էր ֆոլկլորային նյութը, այլ այն դարձնում էր իր անհատականությունը արտահայտելու միջոց։ Նշելով նրա անդամաճան հավատարմությունը ժողովրդական հեքիաթի գաղափարին ու ոճին, չպետք է մոռանալ նրա գեղարվեստական անհատականության մի այլ առանձնահատկությունն, այն, որ Թումանյանը ֆոլկլորային սկզբնաղբյուրը մշակելիս դրան հաղորդում էր իր գրական մանրանյութի բոլոր յուրահատկությունները։ Թումանյանը ժողովրդական ստեղծագործության վրա հիմնված գործերում (ոչ միայն հեքիաթներում, այլև «Սասունցի Դավիթ», «Հաղարան բլուրը» պոեմներում), ֆոլկլորից փոխառնելով թեմաներ, սյուժեներ, հիմնական միտումը, ստեղծում է ինքնուրույն կառուցվածքով երկեր, կերպարների ընդ-

¹ «Թումանյանը քննադատ», Ժողովածու, Երևան, 1939, էջ 451։

² Վ. Բելինսկի, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 671։

թաղրման մանրամասներով, սյուժետային մոտիվների համադրմամբ և, վերջապես, նյութի դա-
դափարական բովանդակության աչնպիսի պարզացմամբ, որը հաճախ չի բացահայտված սկզբ-
րնագրչություններում:

Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթում, որ մեր ուսումնասիրության առարկան է, առա-
վելագույն չափով են արտացոլված հայ խոշորագույն բանաստեղծի թե՛ վերաբերմունքը ժո-
ղովրդական բանահյուսության նկատմամբ, և թե՛ բանահյուսական նյութը մշակելու նրա մե-
թոդները:

«Քաջ Նազար» Թումանյանը գրել է 1908 թ., բայց ձևագիրը կորել է: Երկրորդ անգամ
այդ հեքիաթը գրվել է 1912 թ. և նույն տարում էլ լույս է տեսել առանձին հրատարակությամբ:

Բանաստեղծը սովորություն է ունեցել առանձին թերթերի վրա գրել տոնել տարբերակներ,
որոնք օգտագործել է հետագայում այս կամ այն հեքիաթի գրելիս: Պահպանվել են նաև «Քաջ
նազարին» վերաբերող գրառումները: Դրանցից պարզ երևում է, որ Թումանյանն այդ հեքիաթը
գրելիս ձեռքի տակ ունեցել է «Сборник материалов для описания местностей и племен
Кавказа» գրքի մի քանի հրատարակությունները, «Сборник сведений о Кавказских
горах» գրքից, Գրիմի եղբայրների հեքիաթները, Աֆանասի սուսական ժողովրդական
հեքիաթները, Գ. Սրվանձտյանի հայկական հեքիաթների ժողովածուն և Գ. Տեր-Աղեքսանյանի
«Թիֆլիսեցի մտավոր կյանքը» գիրքը: Բացի դրանից, Թումանյանին հայտնի է եղել հեքիաթի
աղբերջանական ձևագիր տարբերակը՝ «Նազար փահլան», դարբնդա գրքերի ազար, փահլան:

Հավատարիմ մնալով դանազան տարբերակների հաշվին ամենալավ տարբերակը հարստաց-
նելու իր մեթոդին, Թումանյանը սրբապա հիմք ընդունել է հայկական «Դրժիկո» հեքիաթը: Հե-
րոսի բնավորությամբ, բնահանուր հնչեղությամբ ամենից ավելի դա է համընկել սյուժեի բնույ-
թի Թումանյանական ըմբռնմանը:

Թումանյանի հեքիաթի սյուժետային սխեման աչնպիսին է. վախկոտ ու ալարկոտ Նազարը,
որին կինը տնից վռնեցել է, սպանում է ճանճերին, խնդրում գյուղական տերտերին իր բաջա-
գործության մասին զրել մի փառասի կտորի վրա և հարկանի էլով ճամփա ընկնում. ճանապար-
հին նա ձևոր է բերում ձի, հանդիպում է խրախճանք անողներին, հսկաներին, սպանում է վաղ-
րին, աճուսանում է հսկաների քրոջ հետ, հաղթում է հարևան թագավորին և ինքը դառնում
թագավոր: Ինչպես տեսնում ենք, Թումանյանը սյուժետային սխեման, «Դրժիկո» հեքիաթի հա-
մեմատությամբ, նկատելիորեն փոխել է, ավելացնելով խրախճանք անողների հետ հանդիպելու
և վագրի հետ մենամարտելու մոտիվները: Առաջին մոտիվը Թումանյանը փոխ է առել Նազնալի
մասին ավարական հեքիաթից³, իսկ գիշատիչի (օձ, ոնգեղջյուր) հետ մենամարտելու մոտիվը
կա և՛ ավարական հեքիաթում, և՛ շեղենական «Քաջ Նեղնայի մասին» հեքիաթում⁴: Բայց ասել,
թե Թումանյանը փոխ է առել այս կամ այն մոտիվը, ինչ-որ տարրեր է օգտագործել դանազան
տարբերակներից, նշանակում է ոչինչ չասել նրա կատարած աշխատանքի էության մասին, պատ-
կերացում չտալ, թե ինչպիսի վարդեստությամբ է նա գեղարվեստական մի ամբողջության մեջ
չուլել տարրեր ո՞՞նչ ունեցող նյութերը: Մշակելով ժողովրդական տարբերակները, Թումանյանը
բաց չի թողել հիմնական դադափարի բացահայտմանը ծառայող որևէ, նույնիսկ ամենաանկա-
տելի, մանրամասն: Այն, ինչ հեքիաթում հաղիվ է նկատվում, սոսկ սովորաբար է, Թումանյանի
մոտ դարգանալով վեր է անվել ամբողջական պատկերի. անշափ հարստացել: Եվ դրանից գործն
ամբողջությամբ ստացել է ավելի մեծ խորություն ու մասշտաբայնություն:

Հեքիաթի հայկական տարբերակը սկսվում է այսպես. «Դրժիկոն աղքատ ու անբախտ մարդ
էր, իր բոլոր ունեղածն էր երկու աչծ և մեկ կով, կովն ալ պընճրկուն (վերվեր ցատկոդ): Դ-
թիկոյի կինը անզգամ էր, շատ նեղություն կուտար էրկան, կըսեր. — Գնա հեռի երկիրներ, դա-
տում բրե, վաստակ բրե, տուն տեղ շինե, հագուստ, կապուստ բեր ինձի, կղներ ու մաքիներ
գնե, ձի գնե»:

Թումանյանը սկզբից եկեթ այլ կերպ է մեկնաբանում հերոսի բնավորությունը: Նազարը
նույնպես աղքատ է, միայն թե իր ալարկոտության պատճառով: Միաժամանակ նա վախկոտ է,
մի քայլ չի կարող անել առանց կնոջ, Կարծ է նրա փեշից: Եվ դրա համար գյուղում նրան կան-
չում են վախկոտ Նազար: Հեքիաթի հերոսին աչնպիսի բնութագիր է տրվում ավարական, շեյ-
նական, թաթարական ու լեռնային թաթարական տարբերակներում: Նրա վախկոտությունն ամե-

³ Сборник сведений о Кавказских горах, հատ. 2, էջ 71—75: Թիֆլիս, 1869:

⁴ Сборник материалов для описания местности и племен Кавказа, 22 հրատ., 3 բաժին:

էջ 4—12, Թիֆլիս, 1897:

նուրեք ընդգծվում է հենց այն մանրամասնի միջոցով, որ վախկոտը ամբողջ օրը ման է գալիս կնոջ փեշից կպած: Թումանյանը նրան «Վախկոտ» մականունն է տալիս: Հետո Նազարին կոչում են «Քաջ»: Գրական այս հնարանքն օգնում է Նազարի երգիծական կերպարի բնութագրմանը: Լերդեն սկզբի մի քանի տողերում հեքիաթի հերոսը սպասիչ բնութագրի է ստացել: Բումանյանը, հավատարիմ ժողովրդական հեքիաթի սկզբունքին, պատումը չի ծանրաբեռնում կենցաղային ու հոգեբանական մանրամասներով: Հեքիաթը, ի տարբերություն մյուս ժանրերի, զործող անձերի բացահայտման բաղձնավորմանը չի պահանջում: Բավական է ասել, որ Լերդ է — չի եղել մի վախկոտ կամ մլատ, և մեր առջև կանգնում է մարդկային բնավորության որոշակի տիպ: Գործող անձանց և նրանց վարքագծի այդ նախապես կանխորոշված բնույթը հեքիաթի զլխավոր առանձնահատկություններից մեկն է:

Այսպիսով, հայկական հեքիաթի հերոսը մոլորված ու դժբախտ մարդ է, իսկ Թումանյանի Նազարը՝ վախկոտ ունչություն, այն էլ պարծենկոտ: Ահա մի անգամ նա կնոջ հետ դուրս է գալիս բակ. «Որ շեմքն է դուրս դալի՝ տեսնում է ճրճբքան լուս-լուսնյակ գիշեր՝ ասում է.

— Այ կնիկ, ինչ բարվան կարելու գիշեր է... Սիրտս ասում է՝ վեր կաց ու գնա շնորոտանից եկող Շահի բարվանը կտրի, բեր տունը լցրու...:

Կնիկը թե.

— Ձենդ կտրի, տեղդ նստի, բարվան կարողիս մտիկ արա...:

Նազարը թե.

— Անգղամ կնիկ, ինչու՞ չես թող անում ես ցնամ բարվան կտրեմ բերեմ տունը լցնեմ: Ել ի՞նչ տղամարդ եմ ես, ինչո՞ւ եմ զղակ ծածկում, որ դու համարձակվում ես իմ առաջ խոսեա: Որ շատ կովում է՝ կնիկը տուն է մտնում, դուրս փակում:

— Հոգեմ էք վախկոտ պոխդ, գե հիմի ցնա բարվան կտրի»:

Ժողովրդական հեքիաթում Գրժիկոնչի կինը բնութագրվում է մեկ բառով՝ «անղզամ»: Թումանյանի երկում Նազարի կնոջը հեղինակային բնութագրում չի տրվում: Այստեղ նրան «անղզամ» է ասում Նազարն ինքը: Բայց այն տառ-տառահինգ բառը, որ հեղինակը գնում է Նազարի կնոջ բերանը, բնութագրում են նրան որպես կոպիտ, կամակոր մի կին, որը սովորել է ուղածի պես ձեռքի մեջ խաղացնել ամուսնուն և վերջնականապես զղվել է նրա ծուլությունից ու անպետքությունից:

Թումանյանն ընդհանրապես ժխտորեն է օգտվում զործող անձանց խոսքով բնութագրելու նախաքից: Պատումը տարվում է գրական լեզվով: Ուղղակի և ուրիշի խոսքը առանձին դեպքերում մտցնելով պատումի մեջ, Թումանյանը օգտագործում է ժողովրդական խոսակցական ձևերը, ժողովրդական դարձվածքները: Սակայն դրանց շնորհիվ չէ, որ հեքիաթը պահպանում է ժողովրդական ոգին: Գլխավորն այստեղ հեքիաթի կերպարների մեկնաբանությունն է, ընդհանուր տոնը:

...Նազարը մնացել է դրսում: Վախից կիսամեռ՝ նա խնդրում է կնոջը տուն թողնել իրեն, լայց կինը անդրդվելի է: Նազարը կուչ է գալիս պատի տակ և զուղղողալով սպասում է լուսաբացին. «...Լուսը բացվում է: Նազարը խոռված, պատի տակին արեկող արած սպասում է, որ կնիկը դա տուն տունի, ու միտ՛ է աճում»: Հատկանշական է «միտք է անում» արտահայտությունը: Ինչի՞ մասին կարող էր մտածել Նազարը: Հավանաբար այն մասին, որ բախտն իր նկատմամբ անարդար է: Եվ աչտեղ նրան խոր մտածումներից կտրում են ճանճերը: Ամառ է, շոգ, ճանճերը ծածկել են Նազարի գեմքը: Իսկ նա ալարում է նույնիսկ ճանճերին քշել: Վերջապես, չհամբերելով, նա խփում է իր երեսին, և ճանճերը թափվում են գետին: Նազարը չափից զուրս վարմացած է. գուցե դա նրա կյանքում առաջին անգամ զործողությունն է: Ուզում է հաշվել, թե որքան ճանճ է սպանել, չի կարողանում. չգիտես հաշվել չգիտի թե ալարկոտությունն է իրենում: Եվ Նազարը որոշում է, որ սպանված ճանճերը հաղարից պակաս չեն:

Ժողովրդական հեքիաթի Գրժիկոն նախ հեռանում է անից, հետո սպանում ճանճերին: Ելլալես է անում նաև ավարական հեքիաթի զուցաղն Նազնալը, որին նույնպես կինը տնից դուրս է անում՝ այլևս չցանկանալով լսել նրա պարծենկոտ խոսքերը: Գրժիկոն յոթ ճանճ սպանելով, գնում է գերվիշի մոտ, և սա թղթի մի կտորի վրա գրում է. «Գրժիկոն է մե, մեկ ձեռքով յոթն ուղի սպանած եմ»: Նազնալը սպանում է ձմերուկի կիպը ծածկած ճանճերին և պատվիրում է դաշինին պատրաստել մի թուր հետեյալ մակագրությամբ. «Մի հարվածով հիսուն է սպանում զլուցաղն Նազնալը»: Թումանյանի Նազարը վազում է ուղիղ զուղղական տերտերի մոտ, պատմում նրան իր սիրադուրծությունը և, հաշտնելով, թե ուզում է կնոջից հեռանալ, խնդրում է հավերժացնել իր հերոսական արարքը: Տերտերը, որին լավ հաշտնի էր Նազարի իսկական էությունը, «կատակի համար», ընդգծում է Թումանյանի, փայտաի կտորի վրա գրում է.

«Անհաղթ հերոս Քաջըն Նազար,
Որ մին զարկի՝ ջարդի հազար»:

Նազարը փախար ամրացնում է փայտի ծալքին, մի ժանգոտած թրի կտոր կապում մեջքին և հարեանի էշին նստած՝ ճանապարհ ընկնում: Նազարն աղքատ է, ոչինչ չունի, իսկ Դրժիկոն հրկու այծ և կով ունի: Որքան էլ կոմիկական է Դրժիկոյի կերպարանքը թուղիտող կովի մեջքին, Թումանյանը հրաժարվել է այդ, թվում է շահեկան մանրամասնից: Կոմիդման այստեղ արտաքին է, իսկ Թումանյանի մոտ ամեն ինչ ունի իր ներքին իմաստը, նույնիսկ կովը էշով փոխարինելու փաստը: Ժողովրդի մեջ, ինչպես հայտնի է, էշը համարվում է ամենահիմար կենդանին: Նազարը էշի վրա, նույնն է, ինչ հիմարը հիմարի վրա, և դա արդեն հիմարության սիմվոլ է:

Նազարը բազմած էշին՝ գնում է բար աշքը կտրի: Դյուղից բավական հեռանալով, նա սկսում է վախենալ: Իրեն «սիրտ տալու համար» սկսում է ինքն իրեն խոսել, երգել, զոռալ էշի վրա: Որքան շատ է վախենում Նազարը, այնքան ավելի բարձր է գոռում: Նրան ձայնակցում է էշը: «Էն աղմուկից ու աղաղակից թռչունները մոտիկ ծառերից են թռչում, նապաստակները թփերից են փախչում, գորտերը կանանչից են ջուրը թափվում...»: Այս տեսարանը, անշուշտ, պարուզական է: Հրաշապատում հեքիաթներում բնութային ալեկոծմանը սովորաբար հետևում է անսովոր ուժի տեր ինչ-որ մի գյուցաղնի կամ սարսափելի հրեշի երևալը: Իսկ այստեղ գնում է մի սղորմելի մարդու, և այդքան աղմուկ: Այդ ժամանակ տնտեսով անցնում է մի ձիավոր գյուղացի: Լսելով զոռալքին աղմուկը, նա թողնում է ձին և ահից փախչում: Նազարը իջնում է էշից, նստում է ձին և գնում իր բախտին ընդառաջ:

Դյուղացու այս էպիզոդը ժողովրդական հեքիաթում չկա: Այն անհրաժեշտ է եղել Թումանյանին գունավորելու համար բախտի երջանիկ բերման մոտիվը: Զուր չէ, որ պատմելով այդ հանդիպման մասին, Թումանյանը բացականչում է. «Բախտը սիրեմ Քաջ Նազար»: Այստեղ առաջին անգամ արտաքինը, ցուցադրականը չի մերվում ներքին էությունը: Ստացվում է, որ վախկոտ, չնչին մարդուկը կարող է նույնպիսի տպավորություն թողնել, ինչ և ահեղի հսկան, եթե դատելու լինենք նրանց արտաքին, մակերեսային հատկանիշներով: Մարդկային այդ կուրթյան առաջին զոհը դառնում է գյուղացին: Հետագայում Նազարը «կախարդում է» ամբողջ երկիրը, իսկ հետո ամբողջ աշխարհը:

Գնում է Նազարը, ինքն էլ չգիտի, թե ուր: Հասնում է մի անծանոթ գյուղ, որտեղ հանկարծ լսում է գունդալի ձայն, Հարսանիք է: Նազարին դիմավորում են հարգանքով, նստեցնում են ամենապատվավոր տեղը, հյուրասիրում: Խրախճանք անողներին տանջում է հետաքրքրասիրությունը. նրանք ուզում են իմանալ, թե ով է այդ տարօրինակ անծանոթը: Վերջապես, Նազարի կողքին նստած տերտերին հաջողվում է կարգալ դրուշի վրայի մակագրությունը. «Անհաղթ հերոս Քաջըն Նազար, որ մին զարկի՝ ջարդի հազար»: Ցնցված տերտերը նորությունը հաղորդում է իր հարեանին, սա կողքի նստածին, երրորդը՝ չորրորդին և այսպես յուրը հասնում է վերջին հյուրին, ու ահա ամբողջ տունը շնչում է, որ նոր հկած հյուրը ինքը Քաջ Նազարն է, որը մի հարվածով հազար մարդ է սպանում... Գտնվում է նաև մեկը, որն իրեն թե վաղուց ծանոթ է եղել Նազարի հետ, բայց անմիջապես չի ճանաչում նրան, որովհետև շատ է փոխվել: Մյուսները սկսում են պատմել նրա սիրագործություններից, նրա հետ միասին «անցկացրած» օրերից: «Հապա ինչպե՞ս է, որ էսպես մարդը հետո ոչ մի ծառա չունի», — հարցնում են անծանոթները: «Էսպես է նրա սովորությունը, — բացատրում են Նազարի «հին ծանոթները» — ծառաներով ման գալ չի սիրում: Մի անգամ էս հարցրի, ոտավ՝ ծառան ի՞նչ հմ անում, ամբողջ աշխարհքն իմ ծառան է ու իմ ծառան»: Եվ սուրն էլ հետը չի վերցնում, որովհետև իսկական որով ամեն մի սովորական մարդ (նշանակում է Նազարը սովորական մարդ չէ) կարող է ոչնչացնել հազար մարդ, իսկ ապա ուժի փորձի նրանց հետ ժանգոտած երկաթի կտորով:

«Հարսանիքում» տեսարանը շատ կարևոր է Թումանյանի հեքիաթը զաղափարական իմաստը բերնելու համար: Հենց այստեղ է կատարվում վախկոտ Նազարի վերափոխումը Քաջ Նազարով: Նա գեղեսի կը «քաջագործություններից» ոչ մեկը չի կատարել, բայց մարդիկ արդեն նրան վերագրում են ն' ուժ, ն' փառք, ն' խելք: Ոչքան խոր ու բազմանշանակալից բան կա յուրաքանչյուր մանրամասնի, յուրաքանչյուր խոսքի մեջ. օտարի փառքից օգտվելու շտապող հյուրերի ռեպլիկներում, այդ հյուրերին հեղինակի տված բնութագրությունների, տեղացի խելքի բերանով ասվող ճառի մեջ: «Մենք վաղուց էինք լսել քո մեծ հռչակը, — ասում է նա, — կարոտ էինք երևադ տեսնելու և ահա էսօր բախտավոր ենք, որ քեզ տեսնում ենք մեր մեջ»: Ի պատասխան դրա Նազարը հասնում է ու ձեռքը թափ տալիս: Ներկաները զաղտնի աչքով եհ անում մի-

մյանց, «հասկանում են», թե որքան իմաստ կա այդ հատաշանքի ու ձևերի թափափարման մեջ... Եվ ժողովուրդը տեղն ու տեղը, իր իսկ ստեղծած քաջի կերպարից շղծած, ոտքի և կանգնում և խմում նրա կենացը: Նազարը հերոս և հռչակաված: Հարսանիքին ներկա գտնվող աշուղը երգում է նրա մեծությունը: Հայկա՜սկան աշուղական ու էպիկական պոեզիայում շատ տարածված զովքի երգի ձևը Թումանյանը օգտագործում է երգիծական իմաստով: Նրա մոտ յուրաքանչյուր տողը շրջակա ծաղր է հնչում Նազարի նկատմամբ:

Հարբած հյուրերը ցրվելով, աշխարհով մեկ տարածում են չեղած հերոսի հրապարակ գալու լուրը, հրաշքներ պատմում նրա սիրահներից, նկարագրում են նրա սարսափազդու կերպարանքը: Քաջ Նազարի փառքը հասնում է Երկրի բոլոր ծայրերը, և սկսում են նորածիններին կոչել նրա անունով (շատ ճշմարիտ ու բազմիմաստ մանրամասն):

Խրախճանքի Լպիզոդը չկա հայկական հեքիաթում: Այն փոխ է առնված ավարական հեքիաթից, որտեղ նա սոսկ Ֆարուլային բնույթ ունի. հեքիաթը Նազնային տանում է վեպիրի աղայի հարսանիքը, որպեսզի վեպիրի օգնությամբ Նազնայը բնկնի շահի մոտ: Թումանյանն այդ միջանկյալ Լպիզոդը իմաստավորել է, դարձրել հեքիաթի գաղափարական բովանդակության բմբունման բանալի:

Հարսանքավորները հողերը կուրսության, անափառության, հիմարության, դուրահավատության մարմնացում են, իսկ ամբողջ տեսարանը սիմվոլն է այն աշխարհի, այն հատարակության, որտեղ բացահայտ ոչնչությունը հնարավորություն ունի զառնալու փառապանծ հերոս, ազդի ազատարար:

Ամենից առավել չափով այս Լպիզոդում է դրսևորվել թումանյանական հեքիաթի զրական բնույթը. բայց դա կատարվել է ոչ թե գրքային, ֆուլկլորի տարերքին խորթ տարրերի առկայության իմաստով, այլ մանրամասների հղկվածության, ամբողջությամբ վերցրած բոլոր պատկերների բնդհանրացման, երգիծական ենթատեքստի բնագրվածան ու բարդացման շնորհիվ: Թումանյանի «Քաջ Նազարում» ինչպես զրական ամեն մի նշանակալի ստեղծագործության մեջ, չկա ոչ մի պատահական մանրամասնություն, ամեն ինչ, բնդհանրապես միանգամայն արտահայտություններն ու բառերը, նրանում ենթադրված են մի բնդհանուր գաղափարի, ծառայում են հիմնական իմաստի բացահայտմանը: Չլինելն այդ մանրությունները, գործը կկորցնեն իր հրապույտն ու նշանակությունը, և որ գլխավորն է, հեղինակային դիմագիծը: Չէ որ կարևոր ոչ միայն այս կամ այն մոտիվն է, այլև նրա մեկնարանումը, նրա խոսքային մարմնավորումը: Բավական է անել հարսանիքի հյուրերին տրված բնորոշումները կամ նրանց դիալոգների մանրամասները, և ամբողջ պատկերը անշափ կազմադրվում: Իսկ կարծես չափ շուրջը ստեղծված հոգևորական միջոցառման բնութագրման համար որքան կարևոր է Նազարի կնոջ՝ հսկաների քրոջ խընդրաբեր եղբայրներին, որ չթողնեն Նազարին իր քաջությունից տարված մենակ հարձակվի թշնամու զորքի վրա: Անբռնազբոս ձևով, կարծես անկատարիորեն այս կարգի մանրամասներ է ներմուծում Թումանյանը պատմի հյուսվածքի մեջ և հենց դրանց շնորհիվ էլ հեքիաթը ձևեր է բերում «թումանյանական» անկրկնելի կոլորիտ:

Ռուսական, վրացական, ավարական, Գրիմ հեքիաթների հեքիաթների տարբերակներում կարծես չափ հերոսը իր քաջագործությունները կատարում է ի ծառայություն թագավորի (շահի, արքայի): Հովհաննես Թումանյանն այստեղ ևս հետևում է հայկական հեքիաթի տրագիկային. հարսանիքից դուրս գալով, Նազարը բնկնում է յոթ հսկա եղբայրների մոտ: Սրանք, որ արդեն յոթ լին Քաջ Նազարի հրապարակ գալը, նրան բնդունում են երկշտությունում ու հարգանքով: Ծիղտ է, Նազարը, տեսնելով ահեղի հսկաներին քառասուն փթանոց գուրդերով, սկսում է վախից զոզալ, ինչպես աշնան տերև, բայց եղբայրները դա բնդունում են իրեն գալույթին նշան և, բնկնելով Նազարի ոտները, ազալում են խնայել իրենց: Նազարը ուշքի է գալիս, ձի նստում և հրականների ուղեկցությամբ գնում նրանց ամրոցը: Այնտեղ եղբայրները նրան արքայական պատիվ են տալիս և այնքան խոսում նրա քաջագործություններից, այնքան դուրս, որ իրենց զեղեցկուհի քույրը սիրահարվում է նրան: Այդ ժամանակ երկրում երևան է գալիս մի վագր և ամենուրեք սարսափ տարածում: «Ո՞վ կսպանի վագրին, ո՞վ չի սպանիլ: Իհարկե քաջ Նազարը կսպանի: Ել ո՞վ սիրտ կանի վագրի դեմ գնա: Ամենքն էլ Նազարի երեսին են մտիկ տալի: Վերևը մի աստված, ցերեկը մի Բաջ Նազար»: Ինչպես ասում են, էլ տեղ չկա: Նազարը արդեն հավաստվում է աստծուն: Մինչդեռ նա ոչինչ չի արել: Բայց ամեն ինչ առջևում է՝ նա դեռ պիտի սպանի վագրին և պարտության մատնի թշնամու զորքին:

Վագրի Լպիզոդը ժողովրդական հեքիաթների նույնանման Լպիզոդների բավական ճիշտ կրկնությունն է: Բայց այստեղ էլ Թումանյանը բնդգծել է առանձին մանրամասները, ուժեղացվել նրանց հնչեղությունը: Լսելով վագրի երեսալու մասին, Նազարը ուզում է փախչել, իսկ շրբ-

ջապատողները կարծում են, թե նա առանց զենքի շտապում է դադանի դեմ. հարսնացուն բռնում է նրան, զենք են բերում, որպեսզի նա մենամարտի բռնվի վագրի հետ և բազմապատկի իր փառ-
 քը ևս մի սխալագործությամբ: Ահա և վագրը սպանված է: Վագրին սպանել է ժողովուրդը, նրա
 վրա հարձակվելով քարերով, թրերով, զենքով: Բայց չէ որ վագրին նստած քշել է նազարը,
 և զա տեսել են բոլորը: Նազարի քաջագործության յուրը հասնում է ամբողջ: Բոլորը՝ ծեր թե երե-
 խա, դուրս են գալիս նրան դիմավորելու, տեղնուտեղը երգեր հորինում, որոնց մեջ փառաբանում
 են Նազարի հերոսությունը:

Նազարը ամուսնանում է հսկաների քրոջ հետ, հարսանիքը տեսում է յոթ օր, յոթ գիշեր: Եվ
 ժողովուրդը նորից գովերգում է քաջ փեսացուին ու նրա գեղեցիկ հարսնացուին:

Թումանյանը հեքիաթի մեջ երեք երգ է մտցրել: Ժողովրդական տարրերակներում այդ երգերը
 չկան, դրանք ամբողջությամբ Թումանյանին են և միաժամանակ գրված են ժողովրդական
 պոեզիայի ավանդույթներով: Երկրորդ երգը բնույթով շատ է նման առաջինին: Նրանում նույն-
 պես փառաբանվում է Նազարի ոչ սովորական բաջուկները, նա նմանեցվում է ուրուրի, կայծա-
 կի ու հրի, ասվում է, որ աշխարհում չկա մեկը, որ հավասարվի Նազարին, որ նա ազատեց բո-
 լորին սարսափելի վագրից, փառք ու պարծանք նրան դարեկար: Երգի յուրաքանչյուր տունը
 ունի կրկնվող տող՝ «Ով Քաջ Նազար»: Եվ այդ պաթետիկ բացականչությունը ավելի է ուժե-
 րացնում երգի երգիծական շեշտվածությունը:

Երրորդ երգը հարսանեկան է, ստեղծված ժողովրդական հարսանեկան երգերի օրինակով,
 փառաբանում է փեսացուին՝ Նազարին ու իր Նազ-յարին: Երգի մեջ նկարագրվում է թագավորի
 ու թագուհու (ժողովուրդն այդպես է անվանում փեսացուին ու հարսնացուին) հաղուտը՝ կար-
 միր թագը, կարմիր գոտին, կարմիր կոշիկները: Նազարը համեմատվում է լուսնյակի, իսկ նրա
 Նազ-յարը «շաղկապ արեգակի» հետ: Այս բոլոր պատկերները առնված են ժողովրդական պոե-
 զիայից: Ժողովրդական երգերի ոճով է արված նաև յուրաքանչյուր տողի վերջին բառի կրկնու-
 թյունը, ինչպես՝ «թագն էր կարմիր, հայ կարմիր, կապեն կարմիր, հայ կարմիր» և այլն: Այս
 երգերը օրգանապես հյուսվել են հեքիաթին, խորացնելով նրա երգիծական ենթատեքստը:

Վերջին էպիգրամը՝ կոկիլը թշնամու զորքի հետ, պահանջված է ժողովրդական տարրերակ-
 ների տրագիկոն մոտիվներում: Ինչպես Դրժիկոն ու Նազնայը, Նազարը նույնպես, իմանալով
 թշնամու հարձակումը, ուզում է փախչել իրենց գյուղը, բայց նրան վերադարձնում են, զենք
 են տալիս, ձի նստեցնում և բաց թողնում կովի դաշտ: Հայկական հեքիաթի հերոսը, համոզվի-
 լով, որ կովից խուսափելը բոլոր դեպքերում հնարավոր չէ, հուսահատությունից որոշում է մեռ-
 նել մարտում և դրանով իսկ փրկվել խաչատուրավելուց: Թումանյանը, հավատարիմ մնալով իր
 կոնցեպտիային, Նազարին զրկում է հոգեկան այդ շատ բնական ձգտումից: Նազարը ընդունակ
 չէ նման «նուրբ» հուզումներ ունենալու: Նա շարժվում է միայն բնազդաբար, գործում գրեթե
 ավտոմատիկ:

Թումանյանի հեքիաթին նվիրված աշխատություններում արդեն նշվել է, որ միակ կենդա-
 նի էակը ձին էր, որ հասկանում էր, թե ինչ է իրենից ներկայացնում Նազարը⁵: Զգալով որ հեծ-
 յալը անփորձ է, ձին խրխնջում է ու ծառս լինում: Նազարը ուզում է կանգնեցնել ձիուն, չի կա-
 բողանում, բռնում է մի ծառից, իսկ փտած ծառը ջարդվում ու մնում է նրա ձեռքին: Թշնամի-
 ները տեսնելով Նազարի ահաբեկու տեսքը, սկսում են փախչել: Ոմանք սպանվում են, ոմանք
 հոջողացնում են փրկվել, իսկ մնացածները հանձնվում են հաղթողի ողորմածությանը:

Ժողովուրդը մեծարանքով է դիմավորում հաղթանակով վերադարձող Նազարին և նրան
 հզակում է թագավոր: Իշխանություն ստանալով, Նազարը պաշտոնները բաժանում է իր հա-
 բազատներին՝ հսկաներին: Եվ մի գեղեցիկ օր նա հանկարծ նկատում է, որ ամբողջ աշխարհը իր
 բռան մեջ է. «Ասում են մինչև էսօր էլ դեռ ապրում ու թաղավորում է Քաջ Նազարը: Ու՛ երբ
 քաջությունից, խելից, հանճարից մոտր խոսք են զրկում՝ ծիծաղում է, ասում է»:

— Ինչ քաջություն, ինչ խելք, ինչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուս
 բախտն է: Բախտ ունե՞ս — քեֆ արա...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է տնում Քաջ Նազարը ու ծիծաղում է աշխարհի վրա:
 Գոյություն ունի հեքիաթային կարծեցյալ հերոսի կերպարի մեկնաբանման հաստատուն,
 ավանդույթ: «Քաջ Նազար» հեքիաթում Թումանյանը, ֆուկլորային սյուժեի շրջանակներում բա-
 ցահայտելով հեքիաթի կերպարը, հնարավորին չափ տիպականացրել է նրան, խորացնելով ու

⁵ Տե՛ս Ս. Ի ն ճ ի կ յ ա ն, Հովհ. Թումանյանի «Քաջ Նազարը», Հայկական ՍՍՌ գիտություն-
 ների ակադեմիայի պատմության ու գրականության ինստիտուտի «Տեղեկագիր», 1938 թ., № 1:

սրելով այն զծերը, որոնք հատուկ են ժողովրդական տարբերակների հերոսներին: Թումանյանի նազարը լրիվ ունիություն է: Նա որևէ դրական հատկություն չունի, նույնիսկ այնպիսի, ինչպիսիք են՝ հնարամտությունը, խորամանկությունը, որոնցով օժտված են ռուսական, գերմանական, դադստանյան և այլ տարբերակների հերոսները: Նա ալարկոտ է, վախկոտ ու սնապարծ: Այդպես էլ նա հանդես է գալիս հեքիաթի ամբողջ բնթացքում: Նա մշտապես գտնվում է ահի և ապշահար դրության մեջ: Այդ վիճակը ուժեղանում է, երբ նրան բաղձնեցնում են թագավորական դահլիճ (Վնազարը մնացել է ապշած ու շշկված)։ Ամեն ինչ կատարվում է նազարի կամքից անկախ։ Բացի ճանճերին ունշացնելուց ու տնից հեռանալուց որևէ բան նա չի անում: Հայնական ժողովրդական հեքիաթի հերոսը նույնպես բացարձակորեն պասսիվ է, բայց այնտեղ Դյուբլյույի բնավորության չափը կոպժը ավելորդ անգամ ընդգծում է «բախտը բերելու» հանգամանքը: Թումանյանի հեքիաթում դա ծրագրված պասսիվություն չէ, այլ նույնիսկ ամենահառադակ զործը կատարելու անընդունակության արտահայտություն: Նազարի կատարյալ ունիությունը ընդգծումը ավելի կոնտրաստային է դարձնում նրա հետագա բարձրացումը: Վախկոտը, որ ալարկոտ է մաքրել քիթն ու քշել ճանճերին, դառնում է աշխարհի տիրակալ: Կարելի՞ է ավելի մեծ անհամապատասխանություն պատկերացնել, քան այն, որ գոյություն ունի մարդու իսկական էության և երջանիկ պատահականության կամ թի մարդկային հիմարության շնորհիվ գրաված պրքի միջև: Թե ինչպես է հիմար ու վախկոտ մարդը հասնում իշխանության ու հարստության, Թումանյանի հեքիաթը պատասխանում է լիակատար ձևով, բոտ որում ամբողջապես հենվելով ժողովրդական նախօրինակների վրա, որևէ օտար բան չներմծելով, գաղափարական բովանդակությունը շխախտելով: Այս հարցի պատասխանը չէր կարող բաղմխաստ չլինել, քանի որ շատ բարձր էր Թումանյանի պատկերում երևույթը, դրա արմատները անհրաժեշտ էր փնտրել ժողովրդի հասարակական կյանքի խոր ընդերքում, նրա գոյության հասարակական պայմաններում: Գոյություն ունի այն կարծիքը, թե Թումանյանի հեքիաթի, ինչպես և ֆոկլորային օրինակի, գլխավոր նշանակությունը սոցիալական երկրծանքն է, թե նրանում ծագվում են ժողովրդի տիրակալները, դարավոր ճնշողները: Բայց եթե նազարն լինել, հեքիաթը միայն պատմական նշանակություն կունենար (ինչպես, ասենք, գլուզացու և տիրոջ, կամ դուզացու և տերտերի մասին ռուսական հեքիաթները), որովհետև երկրծանքի տվյալ օբյեկտը վաղուց արդեն վերացել է մեր իրականությունից: Այն, որ նազարը վերջ ի վերջո դառնում է թագավոր, բոլորովին չի նշանակում, թե հեքիաթը սուր ծալքով ուղղված է թագավորական իշխանության դեմ: Նրա իսկական խմաստը, ամբողջությամբ վերցրած, ավելի լայն է ու նշանակալից: Ժողովրդական մտածողության մեջ արքայական թագը, որին արծանանում է Քաջ Նազարը, հաջողության ու բախտը բերելու վերջնական սահմանն է: Ո՞վ է թագավորից, շահից ավելի լավ ապրել: Նրանց ձևերին են կենտրոնացված եղել ամբողջ իշխանությունն ու հարստությունը: Եր հերոսին թագավոր դարձնելով, հեքիաթն ընդգծում է նրա անհամապատասխանությունը այն բարձր գիրքին, որ բախտը պատրաստել է նրա համար: Հետևաբար, հեքիաթում նազարը ծագվում է ոչ թե իբրև թագավոր, որոշակի սոցիալական խավի ներկայացուցիչ, այլ իբրև մի մարդ, որը արծանի չէ մյուսներից բարձր դասվելու և գրավելու այն տեղը, որը, ժողովրդի պատկերացմամբ, պետք է զբաղի ամենաբարձր, ամենախելոք և ամենաազնիվ մարդը: Հեքիաթում նազարը թագավոր է հռչակվում հենց այն բանի համար, որ թվում է աչքային: Եվ Թումանյանը, ստեղծագործաբար մեկնարանելով հեքիաթի, ամբողջությամբ մնացել է ժողովրդական հասարակական ու էթիկական պատկերացումների ոլորտում: Նա հեքիաթը չի խեղաթյուրել, չի փորձել «նրա հարուստ խմաստը ծածկագրել մանրուքներով» (Մարշակ):

Թումանյանի հեքիաթի գործողության սյուրը, երկի փյլխոփայական խոր բովանդակության շնորհիվ, անշափ լայն է և կարող է համապատասխանել մարդկային կյանքի յուրաքանչյուր բնագավառի՝ և՛ սոցիալական, և՛ քաղաքական և՛ տնծնական: Քաջ Նազար կարող է լինել քաղաքական խոշոր գործիչն ու ցածրաստիճան ծառայողը, զինվորական հրամանատարն ու դիտնականը, վարչական աշխատողն ու արվեստագետը, ամեն մեկը տնկախ գրադմունքից ու սոցիալական դրությունից: Քաջ Նազար է նա, ով «իր տեղում չէ», ով բարձրացել է ոչ իր արծանիքներով, նա, ում ներքին էությունը ոչ մի կերպ չի համապատասխանում իր գրաված գիրքին:

Շատ կարևոր է հեքիաթի վերջը. «Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քեֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում աշխարհի վրա»: Քաջ Նազարը անշափ կենսունակ է, տարբեր ժամանակներում, տարբեր հանգամանքներում նա տարբեր տեսք է ընդունում: Նա ամեն անգամ ծնվում է, երբ դրա համար բարերար պայմաններ են ոտեղծվում: Ըստ որում ոչ միայն ամուր կերպով հաստատվում է կյանքում և «ծիծաղում աշխարհի վրա», այլև մշակում է իր սեփական փյլխոփայությունը: Հիշենք, թե ինչպես էր ձևակերպել նազարը իր կյանքի դավանանքը. «Ինչ քա-

չություն, ինչ խելք, ինչ հանճար. դատարակ բաներ են բոլորը: Բանը մարդուս բախտն է: Բախտ ունենա—քեֆ արա»: (Այս փիլիսոփայությունը, «քաջնազարականություն» անունով, ծավալուն արտահայտություն դառավ Դերենիկ Դեմիրճյանի հեքիաթ-պիեսում, բայց ուրիշ են սրա ժանրը և հնարավորությունները):

Այն ժամանակից, երբ դրական շրջապատույթի մեջ մտավ Քաջ Նազարի (հենց Քաջ Նազարի, և ոչ թե Դրժիկույի, Ֆոմա Բերենիկովի կամ քաջ դերձակի) կերպարը, նրա անունը դարձավ դատարկ հեղինակություններին, կեղծ կոտորերին, սուտ մեծություններին բնորոշելու ածական: Այսպիսի խոշոր ընդհանրացման է հասել Թումանյանը:

Հովհաննես Թումանյանի «Քաջ Նազարում» փիլիսոփայական իմաստությունը, ժողովրդական աշխարհըմբռնումը և ժողովրդական հեքիաթի մեկնաբանող գրողի բարձր տաղանդը դուրսկերցված են իրար: Դրա շնորհիվ մեծ բանաստեղծի ստեղծագործությունը դարձել է աղգային գրականության գոհարներից մեկը:

С. А. Гулакян

ИДЕЙНОЕ СОДЕРЖАНИЕ СКАЗКИ ОВАНЕСА ТУМАНЯНА «ХРАБРЫЙ НАЗАР»

Резюме

В основу сказки великого армянского поэта Ованеса Туманяна «Храбрый Назар» лег сюжет о мнимом герое, широко известный в мировом фольклоре. Туманян при обработке сюжета использовал аварский, азербайджанский, армянский, дагестанский, русский, татарский, чеченский и другие варианты сказки. Но основным фольклорным образцом для Туманяна послужила армянская сказка «Дижико», которая по общей тональности, по характеру героя более всего отвечала его пониманию идейного содержания сюжета. Ованес Туманян в огромной степени обладал способностью большого художника брать у народа темы, образы, сюжет и возвращать их народу идейно и художественно обогащенными. Поэтому Туманян не ограничивал себя работой над совершенствованием формы фольклорного произведения, он хотел выявить основную мысль его, часто присутствующую подспудно, заострить, подчеркнуть ее, достигнув глубоких обобщений. Прекрасным примером такого подхода к фольклорному первоисточнику является обработка сказки о мнимом герое.

Трус, бездельник и хвастун достигает славы и богатства, становится царем. Как же это происходит? Рассказывая о похождениях мнимого героя, народная сказка акцентирует момент везения, счастливой судьбы. Туманян в своей сказке показал, что корни этого явления надо искать в глубинных пластах общественной жизни народа, в социальных условиях его существования. Не счастливая судьба, а сами люди, их духовная слепота, тщеславие, легковерие, глупость превращают никчемного человека в славного героя.

С тех пор, как в литературный оборот вошел образ Кадж Назара, имя его стало нарицательным для обозначения пустых авторитетов, ложных кумиров, мнимого величия. Такова степень обобщения, достигнутого Ованесом Туманяном.